Արձանագրություն N 3

«ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/15» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան **11.04.2019թ.**

ժ. 11:00

Մասնակցում էին.
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Սուքիասյան
Հանձնաժողովի անդամներ՝

Հ. Մարտիրոսյան
Ա. Ավետիսյան
Հ. Խեչումյան
Ռ. Պողոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կարապետյան

1. Մասնակիցների հայտերը գնահատելու մասին

(Տ. Սուքիասյան)

Ընդունել ի գիտություն, որ Աշոտ Հովհաննիսյանի անվան հումանիտար հետազոտությունների ինստիտուտ ՀԿ-ի հայտում առկա անհամապատասխանությունը մասնակցի կողմից չի շտկվել:

Հանձնաժողովը որոշեց.

1.1 Գնահատման արդյունքները ամփոփելու նպատակով գնահատման թերթիկները լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

1.2 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ հանձնաժողովը որոշեց ընթացակարգի 14-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել **Հ. Թումանյանի թանգարան ՊՈԱԿ**-ին, 15-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել **Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան ՊՈԱԿ-ին** որպես բավարար գնահատված և ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

1.3 Մերժել **«Ակտուալ արվեստ» մշակութային ՀԿ-ի** հայտը մասնակցի գնային առաջարկի՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով, և **Աշոտ Հովհաննիսյանի անվան հումանիտար հետազոտությունների ինստիտուտ ՀԿ**-ի հայտը՝ մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու՝ հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

1.4 Ընթացակարգի **2-րդ, 4-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ** չափաբաժինները

հայտարարել չկայացած՝ հայտերի բացակայության հիմքով, իսկ **1-ին, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ** չափաբաժինները հայտարարել չկայացած հայտերի հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1.5 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը հանձնաժողովը որոշեց՝ էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակիցների անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաև համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.</u>
(Տ. Սուքիասյան)

Հանձնաժողովը որոշեց «ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/15» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ՝ ընթացակարգի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացության տրամադրման և առաջին տեղ զբաղեցնող մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը և գնահատման թերթիկները հանձնաժողովի քարտուղարի կողմից հանձնաժողովի անդամներին տրամադրելուն հաջորդող 1-ին աշխատանքային օրը ժամը՝ 11:00-ին, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք, ՀՀ մշակույթի նախարարություն, 6-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի Նախագահ՝		Տ. Սուքիասյան
Անդամներ՝		Հ. Մարտիրոսյան
		Ա. Ավետիսյան
		Հ. Խեչումյան
		Ռ. Պողոսյան
Քարտուղար՝		Ն. Կարապետյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

շահերի բախման բացակայության մասին

Ք.Երևան **11.04.2019 թ.**

«ՀՀՄՆ-ԳՀԱՊՁԲ-19/15» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Տ. Սուքիասյանս, անդամներ՝ Հ. Մարտիրոսյանս, Ա. Ավետիսյանս, Հ. Խեչումյանս, Ռ. Պողոսյանս և քարտուղար՝ Ն. Կարապետյանս նշված ծածկագրով գնանշման հարցման հայտերի բացման նիստից հետո հայտարարում ենք, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

Հանձնաժողովի Նախագահ՝		Տ. Սուքիասյան
Անդամներ՝		Հ. Մարտիրոսյան
		Ա. Ավետիսյան
		Հ. Խեչումյան
		Ռ. Պողոսյան
Քարտուղար՝		Ն. Կարապետյան